

631

Ս- 41

բոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ

ՍԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄ-ԿՈՄԻՏԵՅԻ

1939 թ. Պ Ա Ր Տ Ա Դ Ի Ր
ԱԳՐՈՎ-ԿԱՆՈՆՆԵՐ

Հաստատված է Սեփանի շրջ. կամգ-կոմի
կողմից մայիսի 17-ի նիստում



1 9 3 9

Նոր-Բայազետի շրջգործկոմի տպարան

04 AUG 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

631

U-41

631 34 (47.925)

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ


ՍԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄ-ԿՈՄԻՏԵՅԻ

1939 թ. Պ Ա Ր Տ Ա Դ Ի Ր

ԱԳՐՈ-ԿԱՆՈՆՆԵՐ

Հաստատված է Սեվանի երջ. կանգ-կոմի

կողմից մայիսի 17-ի նիստում



1939

Նոր-Բայազետի երջգործկոմի սպարան

13 0 JUL 1913

15359

Գրավոր լիազոր
№ 903
Տիրաժ 200 օրինակ



42829-63

«Ել ավելի ծավալել մեր հողագործության և
անասնապալության վերելքն այն հաշվով, վեր-
աճեցնել 3—4 ասիների ընթացքում հասնենք
ստեղծել 8 միլիարդ փուխ հացահատիկի ա-
րտադրության, հեկտարից 12—13 ցենտներ մի-
ջին բերքավորությամբ, տեխնիկական կուլտու-
րաների գծով արտադրությունն ավելացնենք
միջին հաշվով 30—35 տկոսով, վաշխարների
և խոզերի գլխատվածքն ավելացնենք կրկնա-
կի, խոտոք յեղջյուրավոր անասունների գլխա-
քանակը՝ 40 տկոսի չափով, ձիերի գլխաքա-
նակը 35 տկոսի չափով» (Ի. ՍՏԱՆԻՆ)։

(Համ կ(բ) 18-րդ համագումարում սված
հաշվետու զեկուցումից)

ՍԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ 1939 Թ. ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈՎԱՆՈՆԵՐԻ

«Բարձրացնել կուլտուրային դաշտերի բեր-
քատվողությունը, մոցնելով և պահպանելով կանո-
նավոր ցանքաշրջանառություն, խորը հերկ, վո-
ջընչացնելով մոլախոտերը, ընդարձակելով ու վաղ
մշակելով ցեղերն ու աշնանավարը, ժամանակին
խնամքով կատարելով տեխնիկական բույսերի
շարամեջ մշակումը և ժամանակին բույս տալը,
պարարտացնելով հողը թե անասնապահական
աղբանքային ֆերմաների և թե կուլտուրային»

ների տնտեսության գումաղբով, հանքային պարտանյութերով, պայքար մղելով գյուղատնտեսության փաստաթուղթերի դեմ, ժամանակին ու խնամքով հավաքելով բերքն առանց կորուստի, պահպանելով ու մաքրելով վոռոգիչ կառուցողմաները, պահպանելով անտառները, տնկելով դաշտերը պահպանող անտառաշերտեր: Խոսքի պահպանելով ճեղագիտական հոդային ուղղանների կողմից ստեղծված տգրեթեխնիկական կառուցումները»:

(Գյուղատնտեսական արտիի որինակելի կանոնադրարքում 4-րդ գլխի 6-րդ կետի Ա յենթակետի):

Ցեղներով Սեվանի շրջանի պետական առաջադրանքի կատարումից և հաշվի առնելով առանձին կոլտնտեսությունների բնապատմական պայմանները մոտավոր միանման ագրո-ձեռնարկումների կիրառելու տեսանկյունով շրջանի կոլտնտեսությունները դասավորել հետևյալ կերպ.

Ա. ԶՈՆԱ

Գյուղերի անունը

Գյուղախումբ

1. Սեվան

6. Արեքսանդրովկա

2. Զոչո

7. Նորաշեն

3. Որդակլու

8. Ծովագյուղ

4. Դոմաձոր

9. Սեմենովկա

5. Ճամաքարերդ

Բ. ԶՈՆԱ

Գյուղերի անունը

Գյուղախումբ

1. Ցառուխ

4. Ծաղկունք

2. Ցայլի

5. Շահրիդ

3. Դամաշեն

Հացահատիկային կոլտուրաների բարձր քանակությամբ ապահովելու, ժողովուրդների առաջնորդ մեծ և խմատուն գեղավար, մեր հայր ՍՏԱՆԻՆԻ ցուցմունքը մոտակա 3—4 տարում հացահատիկի արտադրանքը ԽՍՀՄ-ում տարեկան 8 միլիարդ փթի հասցնելու, մեկ հեկտարից միջինը 12—13 ցենտներ հացահատիկի քանակությամբ կենսագործելու նպատակով իբրև միջին փանոններ շրջանի գյուղատնտեսական հիմնական աշխատանքների համար սահմանել հետևյալ ագրո-կանոնները:

1. ՍԵՐՄԱՅՈՒՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

«Ճանքի համար ընտրել լավագույն սերմեր, մաքրել դրանք ամեն տեսակ աղբից, պահպանել համապատասխան ու փչացումից, պահել դրանք մաքուր ոգափոխվող շենքերում, ընդարձակել տեսակավոր սերմերի ցանքը»:

(Որինակելի կանոնադրարքում 4-րդ գլխի Բ կետի):

1. Խստիվ արգելվում է ցանել այն սերմաքանները, վորոնք սերմ ստուգող լաբորատորիայի հազմից տվյալ սերմացույի լավորակությունը հաստատող համապատասխան փաստաթուղթ չունենա:

2. Կոլտնտեսությունների ամբողջ ցանքի տեսակաշարժը պարտադիր կարգով յենթարկել լաբորատոր ստուգման առնվազն յերկու անգամ, ըստ վորում առաջին ստուգումը ավարտելվոչ ուր

քան հոկտեմբերի 15-ը, իսկ յերկրորդը գարնանացանքից 20 որ առաջ:

Աշնանացանքի վերջին լաբորատոր ստուգումն ավարտել վոչ ուշ քան ցանքից 5 որ առաջ:

3. Ցանքը կատարել, դեկավարվելով 3 հոկտեմբերի 1933 թվի № 1-ին ՈՍՏ-ով, միաժամանակ պայքարելով 100%-անի մաքրության համար:

Սերմացուն զտել այնքան անգամ, մինչև վեր համապատասխանի մաքրության կոնդիցիային:

Մանրաբյուր. Առաջին դասին պատկանում են գարնանացան ցորենի, գարու, վալսակի և հացահատիկների այն սերմացուները, վորոնց հիմնական կուլտուրայի սերմերի օտկոսը հավասար է 99 %, իսկ խառնուրդը և հիմնական կուլտուրայի տականքը հավասար է 1%-ի, վորից մեռած աղբը հավասար է 0,2-0%-ի, այլ կուլտուրական բույսերի սերմերի քանակը վոչ ավել քան 5 հատ մեկ կիրգրամում, մուլախոտերի քանակը վոչ ավել քան 5 հատ մեկ կիրգրամում, ծլունակությունը վոչ պակաս քան 95%:

Յերկրորդ դասին պատկանում են 97% հիմնական կուլտուրաների սերմերը և 30%-ից վոչ ավել խառնուրդ հիմնական սերմերի տականք ունեցողները, վորից մեռած աղբ վոչ ավել 0,5-0% այլ կուլտուրաների սերմեր մեկ կիրգրամում վոչ ավել քան 150 հատ, մուլախոտերի սերմեր մեկ կիրգրամում վոչ ավել քան 150 հատ:

Մրիկի պարկեր վոչ ավել քան մեկ կիրգրամում 10 հատ, ծլունակությունը 90%:

4. Կոնդիցիայից բարձր աղբոտված սերմացուն ՎիՄ 2-ով քամհար գերմադախչ և տրիերի բաղկացած հատուկ ագրեգատով զտել և ստուգել այնքան անգամ, մինչև վոր սերմացուն համապատասխանի սահմանված կոնդիցիային:

5. Լաբորատոր ստուգման համար սերմացույի նմուշները վերցնել խմբակային ագրոնոմի կամ սերմը ստուգող լաբորատորիայի մասնագետի և կամ նրա կողմից գրավոր լիազորված անձի միջոցով միայն:

6. Ամբողջ հացահատիկի սերմացուն յինթաբկել ախտահանման, ըստ վորում սերմադատերինը կատարել բացառապես թաց, իսկ մեռած կուլտուրաների սերմերը ըստ հնարավորին նույնպես առաջին հերթին թաց կամ կիսաչոր յեղանակով:

7. Գոմաղբը պետք է պահել հատուկ կառուցված աղբամբարներում, իսկ մեզը միզամբարներում և հոգ տանել վոր ազդադրել կորուստ չլինի:

2. ԴԱՇՏԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

8. Սահմանել, վոր պարարտացման նպատակով առանձնացվող մոխիրը, թոչնաղբը, խառնաղբն ու գիշերային վոսկին կույտերով պահանքներ հատուկ աղբանոցներում ծածկի տակ, իսկ

գարնանը գոմերում յեղած անասունների աղբը
լցնել փոսերի մեջ, վրան ավելացնել խառն աղբ,
ծածկել հողի շերտով և հասունացումից հետո տե-
ղափոխել դաշտ:

9. Ուշ աշնանը և ձմռան ընթացքում դաշտ
փոխադրվող պարարտանյութերը, հողի յերեսին
ցրելն արգելվում է, թույլատրվում է միայն գաշ-
տերում դասավորել մեծ կույտերով, հեկտարին
տրվող նորման 3—4 կույտից վոչ ավել, վորն
անհրաժեշտ է պնդացնել և վերևից տանիքածե
ծածկել հողի շերտով:

10. Գարնանը դաշտերը բացվելուն պես, հա-
վասար շաղ տալ հողի յերեսին և անմիջապես
խոր վարել ուշ աշնանը և ձմռանը դաշտ փոխա-
դրած ու կիտած պարարտանյութը, իսկ գարնա-
նը տեղափոխած պարարտանյութերն անմիջապես
շաղ տալ և վարել:

11. Ցրտահերկի տակ գնացող հողերը պա-
րարտացնել նախքան ցրտահերկի հիմնական վա-
րըն սկսելը, իսկ դյուրալուծ պարարտանյութերով
պարարտացնելիս պարարտանյութը մտցնել ցրե-
տահերկի գարնան կրկնահերկից առաջ:

12. Մոխրաղբով պարարտացնելիս ծանր կա-
վային և կավաավաղային հողերին տալ հեկտա-
րին 25 տոննա, թույլ սևահողերին և շակա-
նակագույն հողերին հեկտարին տալ 20 տոննա:

13. Ըստ գյուղախմբերի սահմանել հետևյալ
չափը.

Ա. ԶՈՆԱՅԻ ՀԱՄԱՐ.

Մոխրաղբով ծանր կավային հողերին հեկ-
տարին 20 տոննա, թույլ սևահողերին 15—18
տոննա, գոմաղբ նույն հողերին հեկտարին 20
տոննա:

Բ. ԶՈՆԱՅԻ ՀԱՄԱՐ.

Մոխրաղբով ծանր կավային հողերին հեկ-
տարին 25 տոննա, թույլ սևահողերին հեկտարին
20 տոննա, գոմաղբ նույն հողերին հեկտարին 25
տոննա:

3. ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

14. Ցանքաշրջանառությունը կիրառված
փոխտեսուկյուններում ցանքը կատարել բացա-
ռապես ցանքաշրջանառության փոխանցման տախ-
տակում նախատեսված կարգով ու քանակով:

15. Ցանքաշրջանառությունը չկիրառված
փոխտեսուկյուններում միջոցներ ձեռք առնել
կատարվող ցանքը մասսիվացնելու համար:

3. ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԵԼԱՇՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

16. Վարից առաջ դաշտի թմբերը հարթել
քարերը դուրս հանել և միջնակները վերացնել:

17. Իբրև կանոն, վարը կատարել հողի քնի
դաշու ժամանակ, միայն գործը գնելիս անպա-
ժան յեղնել ավյալ դաշտի նախորդ վարի ուղղու-

թյունից, առը ներսի դեպքում անպայմանորեն
գործ դնել դեպի դուրս և ընդհանրապես:

18. Վարը կատարել մաքուր, առանց խամ
և խարակի ու նախորդ վարի ուղղահայաց ուղ-
ղությամբ, բազմախոփ գութաններով վարելիս
բոլոր խոփերը պահպանել հավասար խորության
վրա:

Բոլոր վարերի նկատմամբ անխտիր կատա-
րել մաքուր գլխավար:

Հողամասերի յեզրերին չվարված տարածու-
թյուններ չթողնել, վարի ընթացքում պարտա-
դիր կերպով ոգտագործել գութանների ձեվիչնե-
րը, դիակերը և նախագութանիկները:

Վարի վորակի ամբողջ պատասխանատվու-
թյունը դրվում է առանձնապես բրիգադերի և
կոլտնտեսություն վարչության նախագահի վրա:

5. ՎՍՐԵՆՍՈՂԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԱՇՆԱՆՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

19. Աշնանացանն իբրև կանոն կատարել
ցելի վրա, 1940 թվի աշնանացանի համար նա-
խատեսված մաքուր ցելային հողամասերը վաղ
ցել անել զարնանացանի կամպանիային գուգա-
հեռ, այն հաշվով, վոր ազատ մնացած բոլոր հո-
ղամասերը վարվեն վոչ ուշ քան ավալ սառնայի-
հասկավոր հացահատիկների ցանքի ավարտման
ժամկետին: Վաղ ցելի ավարտման ժամկետ հա-
մարել 10 հունիսի:

ա) Փառուխ, Յայլի, Դոմաշեն, Ծաղկունք,
Շահրիդ, Չոչոի ցածի մասերը, Դոմաձորի ցածի
մասերը, ծամաքարերդ մինչև 1-ը մայիսի, իսկ
Սեվան, Ուղակուռ, Ալեքսանդրովկա, Նորաշեն,
Սեմենովկա, Ծովագյուղ, Դոմաձորի վերի հողա-
մասերը, Դոմաձորի Չամաղուկները և Չոչոի վե-
րին հողամասերը մինչև մայիսի 10-ը:

Թե մեկ և թե մյուս դեպքում վարի խորու-
թյունը սահմանել վոչ պակաս քան 20—22 սմ-
այն հողերում, վորտեղ վարելաչերտը ավելի նը-
վազ է, վարի խորությունը սահմանել վարելա-
չերտի ամբողջ խորությամբ:

Վաղ գարնանը թե սև և թե վաղ ցելը փոց-
խել, ցաքանիկ ջրի գոլորշիացումը կանխելու հա-
մար:

Ցելը կանաչելուց, յերբ մոլախոտերը գրեթե
դադարում են ծլելուց, կատարել լուչովկա բազ-
մախոփ գութանով 7—8 սանտիմետր խորությամբ
և անհրաժեշտության դեպքում անմիջապես փոց-
խել:

Ցելի կրկնակի կանաչելուց հետո պարա-
տացնել խառն աղբով, պարարտանյութն անմի-
ջապես ցրել և նույն օրը վարել:

Այն դեպքում, յերբ գոմաղբը մտցվում է հո-
դի մեջ թարմ, դամանոտ (վոչ փաած) վիճակում,
վարը պետք է կատարել վարելաչերտի լրիվ խո-
րությամբ, իսկ յեթե փաած գոմաղբ է մտցվում,

վարը պետք է կատարել 20 սանտիմետր խորութեան վրա:

Աշնանացանքից առաջ կատարել կուլտիվացիա և փոցխում, վորից հետո ցաննել:

30. Լանջերի ավազոտ հողերի, կամ մեծ վարելահանգի չունեցող հողամասերի վարի խորությունը հաշմարեցնել վարելաչերտ չունեցող հողամասերի վարի խորութեանը, հարմարեցնել նրա կուլտուրան շերտին (այդ խնդիրը յուրաքանչյուր անգամ համաձայնեցնել տեղական ագրո-պերսոնալին):

21. Ձբաղված ցիլը խոտհնձին կամ զբաղեցնող կուլտուրայի բերքահավաքին զուգահեռ վարել, միաժամանակ կատարել փոցխում (վարի խորությունը սահմանել 20—22 սանտիմետր):

6. ՎԱՐԵԼԱՅՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ

22. Գարնանացանը իբրև կանոն կատարել ա) ցրտահերկի վրա, բ) շարքահերկ բույսերից հետո, գ) բազմամյա խոտերից ազատված և աշնանը հերկած հողերում, գ) լավագույն նախորդ հողերը ապահոված հողամասերի վրա:

23) Բոլոր դեպքերումն էլ դաշտի հիմնական վարը հացահատիկային կուլտուրաների համար կատարել առնվազն 20—22 սանտիմետր խորութեամբ, իսկ այն հողերում, վորոնց վարելաչերտը

մեծ չէ, վարի խորությունը սահմանել վարելաչերտի ամբողջ խորութեամբ:

Գարնանացանի համար նախորդ տարվա աշնանը խորը և բարձր վորակով վարված հողամասերը, վաղ գարնանը թեթև կրկնավարել լուռ չենիկներով և կուլտիվատորներով, անպայման կրկին փոցխել, սեզերը հավաքել ու միայն նոր ցաննել:

Ծանր նստած հողամասերի կրկնավարը կատարել խոր, անհրաժեշտութեան դեպքում այդ հողամասը գարնանը կրկին խոր վարել (ագրոնոմի ցուցմունքով) հակառակ ուղղությամբ լավ փոցխել ու կատարել ցանքը:

Ցրտահերկի վրա գարնանը պարարտանյութ տալու դեպքում անպայմանորեն քեշին կրկնավարել այն հաշվով, վոր պարարտանյութը լավ ծածկվի հողում:

Կրկնավար կատարված հողամասերը անմիջապես փոցխել:

7. ՑՐՏԱՅԵՐԿԻ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

24. Բերքահավաքին զուգընթաց կատարել խոզանի յերեսվար 5—8 սանտիմետր խորութեամբ, իսկ աշնանը այդ հողամասն անպայման խորը վարել 22—24 սմ. խորութեամբ, խոզանի յերեսվարը կատարել առաջին հերթին մուրախոտերով ավելի վարակված հողերում:

25. Շարքահերկ բուսերից դաշտն ազատե-
լուց հետո կատարել ցրտահերկ 20—22 սմ. խո-
բությամբ:

26. Ցրտահերկի կատարելուց հետո առաջա-
քած մեծ կոշտերը ջարդել: Ցրտահերկի ավարա-
ման ժամկետ սահմանել հոկտեմբերի 25-ը:

8. ՍԵՐՄԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՒՄ

27. Տեսակավոր և տեղական բարձր բեր-
քատու և արժեքավոր սերմացուներով հացահա-
տիկային կուլտուրաների ամբողջ տարածություն-
ներն ապահովելու համար, ընթացիք գործնա-
բար կուլտուրացություններում ընտրել և առանձ-
նացնել սերմադաշտերի համար ամենից բերրի,
լավ մշակված, պարարտացված և մոլախոտերից
մաքուր հողամասերը:

Սերմադաշտերը պետք է ունենան լավ նա-
խորդ աշնանացան հացահատիկների համար վաղ
ցել, գարնանացան հացահատիկների համար—
շարքահերկ կուլտուրաներ, միամյա և բաղմամյա
խոտաբույսեր:

28. Ցանքաշրջանառություն կիրառող կոշ-
տնտեսություններում սերմադաշտն առանձնացնել
ցանքաշրջանառության համապատասխան դաշտի
ամենալավ հողամասից:

Սերմադաշտերին հատկացնել ցել, կամ լավ
մշակված ցրտահերկ, պարարտացրած և մոլախո-
տերից մաքուր, լավ մշակված հողամասերը:

29. Սերմադաշտերի տարածությունը սահ-
մանել այն չափով, վորն ապահովի ավյալ կուլ-
տուրայի (սորտի) ցանքի ամբողջ տարածություն-
ներ սերմացույով (10—15⁰/օ-ի սահմաններում
սերմապֆոնդը):

30. Սերմադաշտերի պարարտացումը կա-
տարել միմյալ մշակված և խնամքով պահպան-
ված գոմաղբով և խառնաղբով:

31. Սերմադաշտերը ցանել առաջին կարգի
բարձր բերքատվություն և զտասորտություն ու-
նեցող սերմացույով, այդ սերմացուն պետք է
առանձնացված լինի սելեկցիոն և տեղական գյու-
ղատնտեսական բարելաված սորտերի ամենալավ
մշակված բերքատու ցանքերից, ինչպես մասա-
յական ընտրության, այնպես ել լավագույն ցան-
քերի ընդհանուր բերքից:

32. Սերմադաշտերի ամբողջ ցանքը կատա-
րել շարքացանով, սերմադաշտերի համար առանձ-
նացված սերմացուն ախտահանել՝ ցորենը թաց,
խսկ գարին և հաճառը կիսաչոր մեթոդով:

33. Սերմադաշտերի համար սահմանել ցան-
քի առանձին նորմաներ, յեղնելով սորտի, հողա-
մասի և ցանքի ձևերից ի նկատի ունենալով,
վոր շատ նոսր ցանքը իջնցնում է բերքը, իսկ
խիտ ցանքը վատացնում է ստացված սերմի վո-
բակը:

34. Սերմադաշտերի ցանքը կատարել ագրո-

տեխնիկորեն ճիշտ ժամկետներում 2—3 օրվա
ընթացքում:

35. Զվոռոզվող հողամասերի սերմադաշտե-
րում սնուցումը կատարել թփակալման շրջանում
կատարվող փոցխից առաջ, իսկ վոռոզվող հողա-
մասերում, բացի փոցխի հետ տրված սնուցումը
տալ նաև հասկակալման շրջանում ջրի հետ միա-
սին հեկտարին 3—4 տոննա խառն աղբ:

36. Սերմադաշտերն քաղհանել ըստ անհրա-
ժեշտության (3—4 անգամ), այն հաշվով, վոր
մինչև խողովակալումը սերմադաշտը լինի մաքուր
մոլախոտերից:

37. Սերմադաշտերում ազրոնոմի ցուցմուն-
քով կատարել սորտային քաղհան:

38. Սերմադաշտերի հունձը կատարել նրանց
լրիվ հասունացման շրջանում:

39. Ամբողջ տեսակավոր և տեղական գյու-
ղատնտեսական բարելաված ցանքերը յենթարկել
ապպրորբացիայի (այդ թվում սերմադաշտերը):

Բարձր բերքատու ճանաչված ցանքերը ապ-
պրորբացիոն արձանագրութուններով, սորտային
հատկութունները հաստատող փաստաթղթերի
համաձայն ըստ կուլտուրաների տեսակների ու
կատեգորիաների հնձել, դիզել, կալել, զտել և
պահպանել առանձին-առանձին, այն հաշվով, վոր
տարբեր սորտեր և կատեգորիաներ միմիանց հետ
չխառնվեն:

մը (սերմերը չթափվելու համար), ըստ անհրա-
ժեշտության այդ ձեռնարկումը կատարել մի քա-
նի անգամ:

62 Մինչև ցանքի կատարելը դաշտերը քա-
ղերից մաքրել և այդպիսին հեռացնել դաշտերից:

63. Զվոռոզվող հողամասերի վաղ գարնանը
հատարել աշնանացանի սնուցում և քեշը գալուն
պես փոցխել, իսկ գարնանացանի սնուցումը կա-
տարել փոցխելուց առաջ:

Վոռոզվող հողամասերում բացի փոցխի հետ
տրված սնուցումը, առաջին և յերկրորդ վոռոզ-
ման հետ սիասին տալ և սնման պարարա-
նյութ, համաձայն ամեն մի առանձին հողամասի
համար վորոշված քանակի:

64. Վաղ կատարած ու թփակալած աշնա-
նացանների առնվազը մեկ անգամ քաղհանում
աշնանից համարել պարտադիր:

Ստտիվ արգելել անասունների արածացումը
թե աշնանը և թե գարնանը ցանված տարածու-
թյուններում:

65. Վոռոզումը կատարել 3 անգամ, առա-
ջին բույսի թփակալման, յերկրորդ հասկակալ-
ման և յերրորդ հատկակալման շրջաններում:
յուրաքանչյուր անգամ ջրելուց հարմարեցնել
տեղի հողային և կլիմայական պայմաններին ու
բույսի պահանջին:

66. Մկենդանի և անասուններից առաջ



սկսել ձյունը դաշտից հալելուն պես, այն հաշվով, զոր մինչև դաշտերում կանաչի յերևալը բոլոր վարակված հողամասերում առաջին և յերկրորդ պայքարն ավարտված լինի, նույնը կրկնել ուշադրանքը դաշտից բերքը հնձելուց ու տեղափոխելուց հետո և ավարտել մինչև ձյունը դալը:

67. Բոլոր ցանքերի նկատմամբ սահմանեց մշտական հսկողություն և ֆիտաստուեներ կամ հիվանդություններ հայտնաբերելու դեպքում անսխալապես հայտնել հողբաժնին ու ՄՏ կայանին և առանց ուշացնելու սկսել պայքարը:

12. ՀԱՅԱՐՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՆԱԿԻ ԽՆԴՐՈՒՄ

68. Բերքահավաքի բոլոր մեքենաները (հրնադ, կալիչ և կոմբայն) ապահովել հատիկալիւնքով, աշխատանքի ընթացքում պարբերաբար ստուգել և գտարկել հատիկակալները, բերքահավաքի մեքենաները նախորոք տխտահանել:

69. Կոլտնտեսության ամբողջ ցանքի նկատմամբ ապահովել դաշտային պահակների հսկողությունը մասնավորապես բերքահավաքի ամբողջ ընթացքում:

70. Բերքահավաքն սկսել ըստ առանձին հողամասերի հասունացմանը, առանց սպասելու ամբողջ դաշտի հասունացմանը:

71. Հացահատիկների հնձի համար վերջնական ժամկետը սահմանել 12—15 աշխատանքա-

յին օր, ըստ կուլտուրաների սահմանել հետևյալ ժամկետները:

ա) Ուկրաինկայի բերքահավաքը կատարել նրա մոմային հասունացման շրջանում և ավարտել 4—6 օրում:

բ) Գարնանացան ցորենի բերքահավաքը կատարել նրա մոմային հասունացման վերջին և լրիվ հասունացման սկզբնական շրջանում ու ավարտել 6—8 օրում:

գ) Գարու բերքահավաքը սկսել լրիվ հասունացման սկզբին և ավարտել վոչ ուշ քան 5—8 օրում:

դ) Հացահատիկների հնձի ավարտման վերջնական ժամկետ սահմանել մինչև սեպտեմբերի 20-ը:

72. Ամբողջ հնձած հացահատիկը խուրձ կապել և դիզել կամ անհրաժեշտության դեպքում բարդոց դնել:

Դիզելու աշխատանքն ավարտել հնձի հետ միասին:

73. Բարդոց դնելիս ղեկավարվել հետևյալ կանոններով:

ա) Խուրձերը դասավորել հասկերով դեպի ներս:

բ) Բարդոցները դաշտում դասավորել մի գծի վրա, այն հաշվով, վոր հնարավոր լինի բարդոցների շարքերի միջ բերքահավաքին ղուգընթաց կատարել խոզանի յերեսվար:

գ) Բարդոց ղենկուց հետո դաշտում թափած հասկերն անմիջապես հավաքել: Սկզբունք ընդունել վոչ մի հասկ չթողնել դաշտում:

դ) Սայլը բարձելիս յուրաքանչյուր բարդոցի տեղը փոցխել և հասկերը հավաքել:

74. Դաշտում բարդոց կամ խուրձ յեղած ժամանակաշրջանում, արգելել անասունների աւրածացումը սովյալ դաշտում և դաշտում աշխատանքը վերջանալուց հետո ավելնորդ անձանց շրջագայությունը:

75. Սահմանել իբրև կանոն, վոր դաշտավարական բրիգադները պարտավոր են ամեն ուր հատուկ արձանագրությամբ ընդունել դաշտում կատարված աշխատանքները, գնահատելով կատարված աշխատանքների վորակը: Դաշտի բերքահավաքն ավարտած համարել այն ժամանակ, յերբ բրիգադիւրից ընդունել և կոլտնտվարչության նախագահը:

76. Պարտադիր կարգով դեզերի մոտ ջրով լիքը տակառներ և ջրամբարներ ունենալ, դեզերի շուրջը վարել և նրանց մոտ ունենալ ավազակույտ:

Կալում և դեզերի մոտ կողմնակի մարդկանց մուտքը արգելվում է:

Վոչ մի պայմանով թույլ չտալ ծխել, ունենալ մշտական պահակներ, զանգ, սուլիչ և այլն:

Բարձր բերքատու ճանաչված դաշտերի ցանքերն ու բերքն ցանել առանձին և ոգտագործել բացառապես, վորպես սերմացու:

40. 1940 թվի աշնանացանը տեսակավոր սերմացույով լրիվ ապահովելու համար ընթացիք տարվա աշնանացանի տեսակավոր բերքատու ցանքերից առանձնացնել գալիք տարվա աշնանացանի համար անհրաժեշտ քանակությամբ սերմացու (կեսից մեկ յերրորդի չափով):

41. Ամբողջ տեսակավոր և տեղական գյուղատնտեսական բարելավված սերմացույի համար կազմել հատուկ մատչյան, գրանցելով ստացված բերքը և բերքատվությունն ըստ սորտերի և կատեգորիաների:

42. Բերքահավաքից մինչև ցանքը սերմացույի պահպանման և խնամքի ամբողջ պատասխանատվությունը դրվում է առանձնապես կոլտնտվարչության նախագահի վրա:

53. Սերմագաշտերի հունձը, փոխադրումը, կալսումն ու ստացած բերքի պահպանումը, կատարել համաձայն ապարդրացիոն ակտերի միջազմայն առանձին-առանձին:

44) Սերմագաշտերի տեսակավոր ցանքերի ցանող, բերքը հավաքող (կտրայն) կալսող և զտող մեքենաներն ու գործիչները պետք է լինեն այլ կուլտուրաների և սորտերի սերմերից միանգամայն մաքուր:

9. ՅԱՐՈՎԻԶԱՅԻԱՅԻ ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

45. Դաճանացան ցորենի և դարու սերմացուն յարովիզացիայից առաջ դտել, ամբողջապես մաքրել մրիկի պարկերից և նոր յենթարկել յարովիզացիայի:

Ինչպես բոլոր ագրո-ձեռնարկումների նույնպես և յարովիզացիայի պլանի կատարումը պարտադիր է:

46. Յարովիզացիան կատարելով ողափոխվող նախորոք ախտահանված ու պինդ հատակ ունեցող շենքերում, կամ նավասենների տակ (հացահատիկների պահեստներում յարովիզացիայի կատարումն արգելվում է:

47. Յարովիզացիայի յենթակա սերմացուն ախտահանել կամ ԱՖ պրեպարատով կամ ֆորմալինով, սահմանված հրահանգի համաձայն:

10. ՑԱՆՔԻ ԽՆԴՐՈՒՄ

ա) Ցանքի ձեռնարկ.

48) Մեքենահարմար բոլոր հողամասերը ցանել բացառապես շարժացանով:

49. Շաղացան կատարել միայն մեքենայացման միանգամայն անհարմար հողակտորներում, այն ել հողբաժնի կամ ՄՏ կայանի հատուկ թույլտվությամբ:

Շաղացան կատարելիս, սերմը ցանել նախապես խորը վառած ու լավ փոցխված հողամասեր վրա և ապա զործարանային կամ տեղում պատ-

բաստված կուլտիվատորներով ու փոցխերով ծածկել սերմերը:

50. Հացահատիկների ցանքի խորութունը թե շարժացանի և թե շաղացանի դեպքում հարմարեցնել տեղի հողային և կլիմայական պայմաններին, իբրև միջին խորութուն հացահատիկների համար սահմանել 4—5 սմ.:

Ուշ աշնանացանները ավազային հողերում ցանել համեմատաբար խոր, սակայն վաղ ավել 3 սմ-ից, իսկ մնացած դեպքերում, խոնավության մեծությամբ հողամասերում 5—6 սմ. խորությամբ:

51. Շարժացանով ցանքը սկսել հողի թեղի վարելու հետ համընթաց, առանձին հողակտորներով, անգամ չապասելով բրդադային ամբողջ հողերի կամ ամբողջ սահմանի հողերի լրիվ թեղի գալուստ:

բ) Ցանքի ժամկետը և խտությունը:

52. Մասնաշաղկապ ցանքն սկսել դաշտ դուրս գալու առաջին իսկ հնարավոր մոմենտին—հողի թեղի գալու ժամանակ և ավարտել ցորենի, գարու, հաճարի և վարսակի նկատմամբ 6—9 բանրու, հաճարի և վարսակի նկատմամբ կատարվող ցանքի ժամկետը նույն կուլտուրաների նկատմամբ սահմանել 4—5 բանվորական որ:

53. Ըստ զոնաների զարնանացան հացահատիկների ցանքի ավարտման ժամկետները:

57. Բոլոր ջրովի հողամասերում, աշնանա-
ցանը ցանքից հետո անմիջապես ջրել, հողամաս-
երը կեղեվակալման դեպքում քեշին թեթև փոց-
իւել, ջրելուց ջրի դիմաց դնել նեղ անցքեր ու-
նեցող ցանց մուլախոտերի սերմերը չանցնելու
համար:

11. ՑԱՆՔԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԽՆԴՐՈՒՄ

58. Կավային և կավալավազային հողերում
կատարած աշնանացանը վաղ գարնանը փոցիւել
թփակալման մոմենտին—հողի քեշին:

Նույնանման հողերում ցանած գարնանա-
ցան հացահատիկները նույնպես փոցիւել նրա-
թփակալման ֆազայից վոչ ուշ: Ավազային հողե-
րում փոցիւում չկատարել:

59. Քաղհանը կատարել այն հաշվով, վո-
ր խոզովակալման մոմենտին դաշտն ամբողջապես
մուլախոտերից մաքուր լինի, քաղհանը կատարել
քսա անհրաժեշտության 2—3 անգամ մինչև ցան-
քերի խոզովակալումը:

60. Քաղհանված մուլախոտերը դաշտից դուրս
հանել և այրել, կամ ուղտազործել իրրի անա-
նակեր:

Փուշը քաղհանել յերեվալուն պես, ձեռքով
և շղպիկով:

61. Ցանքերի, հանդամիջյան ճանապարհնե-
րի, առուների և ջրերի ու թմբերի վրա անած
մուլախոտերը հնձել մինչև նրանց ծածկակալու-

վիզովի պրեպարատով մեկ ու կես կիլո մեկ տոն-
նային):

դ) Դարնան ընթացքում դաշտում կտալ-
հատի լու հայտնաբերելու դեպքում ցանքը փո-
փոշոտել կրեմֆոտորային նատրիումով մեկ հեկ-
տարին 10 կիլոգրամի չափով, կամ մշնդեդա-
թըթվուտային կալցիումով մեկ հեկտարին 10 կի-
լոգրամի չափով:

յ) Կրծող միջատների դեմ պայքարելու հա-
մար (սովկայի թրթուռեր) փոշոտումը կատարել
ավելի զարգացած բույսերի վրա նույն թույնե-
րով և նույն դոզաներով:

զ) Սերմը նախ քան պահեստ տանելը չո-
քացնել:

Բերքահավաք

101. Բերքահավաքը կատարել լրիվ հասա-
նացման շրջանում, յիբը կտավատի պտուղը
ստանում է մուգ գույն, իսկ սերմերն ստանում
են դարչնագույն:

102. Կալսումը կատարել բերքահավաքին
զուգընթաց լրիվ չորացման ժամանակ:

103. Ձմռան ընթացքում պարբերաբար հրա-
կել առանձնացված սերմի վիճակը, ֆուսսատուներ
հայտնաբերելու դեպքում միջոցներ ձեռք առնել
այգպիսին խողառ վոչնչացնելու համար:

104. Մինչև սերմացուն ամբարիլը, պահեստը
լավ ախտահանել:

14. ԿԱՐՏՈՑԻԼԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

Հոգաճատի նախապատասխանում առաջադրված

105. Կարտոֆիլին հատկացվող հողամասեր խոր հերկը կատարել վաղ աշնանից 22—25 սմ. խորությամբ, առանց փոցխելու թողնել մինչև գարուն:

106. Աշնանավար-ցրտավար կատարված հողամասերում, գարնանը առանձին, իսկ հնարած վորություն ղեպքում (քեղին) կավոտ, ծանր և ջրարբի հողամասում կատարել հրկնավար 20 սմ. խորությամբ, անջրդի և չորային պայմաններում հրկնավարը փոխարինել 5—8 սմ. խորությամբ կուլտիվացիայով, կամ մեկից յերկու քեռս զրգազորով փոցխելով:

107. Իբրև կանոն արգելել կարտոֆիլի տեղ կարտոֆիլ ցանելը, ինչպես և լարավորթով ու փողիանման քոսով վարակված հողամասերում 2—3 տարի կարտոֆիլի մշակումը:

108. Տեղական պարարտանյութերով պարարտացումը կատարել հիմնականում աշնանից-աշնան խոր վարի տակ, այն հողամասերը, վորոնք աշնանից չեն պարարտացվել, պարարտացնել գարնան հրկնավարի, կուլտիվացիայի կամ փոց-խի տակ: Աշնանը ոգտադործել թարմ և կիսափ-թած գոմաղբ, գարնանը միմիայն փտած վիճա-կում:

Ձմաանը դաշտ փոխադրված պարարտանյութ-

թերը կուլտերով դասավորել, ցրումը կատարել գարնանը հրկնավարի կամ կուլտիվատորի տակ:

Իբրև որինետիր նորմա առաջադրել հեկտա-բին—գոմաղբ՝ 40—50 տոննա, խառնաղբ՝ 15—25 տոննա, մոխիր 3—5 տոննա:

109. Բոլոր կոլտնտեսություններում ա-ռանձնացնել սերմադաշտերի համար աշնանավար պարարտ և մասսիվ հողակտորներ:

Սերմացույի նախապատասխանը ցանքի համար

110. Ցանքի նախորյակին կազմակերպել սերմացու կարտոֆիլի ըստ գույնի ընտրություն, իբրև սերմացու ոգտադործել 50 և ավելի մեծ զրամանոց միագույն, առողջ պլալներ: Հող-բաժնի կամ ՄՏ Կայանի թուլյալությունը իբրև քացառություն թուլյալորել սերմացույի համար (բացի ժողովրդական սորտից) ավելի մանր պա-լարների ոգտադործումը: Կարտոֆիլի տարբեր գույների պլալների ցանքը կատարել ա-ռանձին հողակտորներում:

111. Կարտոֆիլի սերմացույի նորմանսահ-մանել տեղում յուրահատուկ մոտեցում ունենա-լու տարբեր հողամասերի նկատմամբ: Մեկ բնում-անկել միայն մեկ առողջ պլալը:

112. Կարտոֆիլի ցանքը կատարել գու-թանի տակ, առաջադրել շաբբ-շաբբից վաղահա-տորտին 60 սմ., միջահաս սորտին 65—70 սմ.,

ուշահաս սորտին 70 սմ., թուփը-թփից 35-40
սմ. հեռավորությամբ:

113. Կարտոֆիլի պալարի տնկելու միջին
խորությունը սահմանել թեթև, ավազային հո-
դերում և չորային պայմաններում 10—12 սմ.,
կավային ծանր հողերում և խոնավ պայմաննե-
րում 8—10 սմ.:

Կարտոֆիլի ցանքը կատարել տվյալ գյուղի
կոլտնտեսության հացահատիկային կուլտուրա-
ների ցանքին զուգահեռ 5—7 բանվորական
տրում:

115. Կարտոֆիլի ծիլերը յերևալու նախոր-
դակին ամբողջ ցանքը զիգզագով մեկ յերկու
յերես փոցխել:

116. Քաղհան-փխրեցում կատարել այն-
քան, վորքան անհրաժեշտ է կարտոֆիլի ցանքը
մոլախոտերից մաքուր և հողամասը փխրուն
դրությամբ պահելու համար, սակայն վոչ պակաս
5 անգամից:

ա) Կարտոֆիլի ցանքն շարքերն նշմարվե-
լուն պես:

բ) Առաջին քաղհան-փխրեցումից 8—10
տր անց:

գ) Առաջին բուկ տալու նախորդակին:

դ) Առաջին յերկրորդ բուկ տալու ժամա-
նակաշրջանում:

յե) Կարտոֆիլի թփի ծաղկման վերջին

77. Կալսումը սկսել հնձի աշխատանքներին
զուգընթաց, վոչ ուշ քան հնձից 3 որ հետո:

Կալսումը կատարել ըստ առանձին բրիգադ-
ների:

78. Բերքահավաքի համար անհրաժեշտ է
գյուղատնտեսական ամբողջ ինվենտարը, նախ-
քան բերքահավաքի սկսվելը պետք է ախտահա-
նել, թույլ չտալ հացահատիկը կալսել հին կալե-
րում, առանց նախապես այգիսին այրելու և
ախտահանելու:

79. Բերքահավաքին անհրաժեշտ ամբողջ
ինվենտարի ձեռք բերումը, վերանորոգումն ու-
վարտել վոչ ուշ քան բերքահավաքի սկզբից 30
որ առաջ:

Նույն ժամկետին ավարտել միջգյուղային
և դաշտամիջյան ճանապարհների և կամուրջների
վերանորոգումը և կարգավորումը:

80. Թաց քյուլաշը նախորոք չորացնել և
միայն նոր թույլ տալ կախիչով կախելու:

Կախիչների 20 ժամյա անխափան աշխա-
տանքը լրիվ չափով ապահովել:

81. Կախիչների աշխատանքներին հարմա-
րեցնել քամահար, սերմազտիչ տրեյներ և կազմա-
կերպել աշխատանքն այն հաշվով, վոր առաջին
հերթին ապահովի ընթացիք ատրվա տշնանացան
սերմացույի անհապաղ սերմազտումը և ատա-
գալիք գարնանացանի սերմացույի լրիվ զտումը:

82. Կամերով կալած թեղն արգելել մեկ տ-
րից ավել առանց քամհարելու կալում թողնելը:
Կալից դուրս յեկած և վոչ մի հատ հացա-
հատիկ առանց կշռելու և համապատասխան բեռ-
նագիր կազմելու պահանջում ամբարելը խստիվ
արգելվում է:

84. Հացահատիկն ամբարել նորմալ խոնա-
վության դեպքում, միայն 12—13 տոկոսից ավել
խոնավություն լինելու դեպքում չսրացնել և ա-
պա ամբարել:

85. Սույն ագրոկանոնների հսկողությունը
գնել հողբաժնի, ՄՏ կայանի, նրա ագրոպրոտ-
նակի և գյուղական խորհուրդների վրա, այս ագ-
րոկանոնները տարածվում են ամբողջ կոտնտե-
սությունների, նույնպես և մենատնտեսների ու
հիմնարկային ցանքերի վրա:

13. ԿՏԱՎՀԱՍԻ ՄՇԱՎՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

86. Կտավհատը պետք է ցանել լավ ստրուկ-
տուրա ունեցող սեվահողերում և շահանակագույն
հողերում:

87. Կտավհատի ցանքն առաջի հերթին ան-
հրաժեշտ է կտտարել բազմամյա խոտաբույսերից
(կորնդան, առվույտ) և շարքահերկ կուլտուրա-
ներից (կարտոֆիլ) հետո, կամ ծայրահեղ դեպ-
քում մեկ տարի հացահատիկներով զբաղեցնելուց
հետո:

88. Նույն հողում կտավհատի ցանք կարելի
է կրկնել 5—6 տարի հետո միայն:

Կտավհատի հողի մեակումը

89. Կտավհատի ցանքի համար հատկացվող
խամ հողերի և բազմամյա խոտաբույսերի վաղ-
ցրտահերկը կտտարել 20—22 սմ. խորությամբ:

90. Նամ հողերի և խոտաբույսերի տակ յե-
ղած հողամասերի բացակայության կամ պակասի
դեպքում կտավհատի ցանքի համար կարելի չե-
առանձնացնել աշնանացանի ուսկ յեղած պա-
րարտացված հողերը, այս դեպքում անհրաժեշտ
է կտտարել խողանի յերեսվար հետագա խորը
ցրտահերկով 20—22 սմ. խորությամբ:

Կտավհատի պարտացուցումը և սնուցումը

91. Կտավհատին հատկացվող հողամասն ան-
հրաժեշտ է պարարտացնել տեղական կամ հան-
քային պարարտանյութերով:

92. Լավ ալրված, փթած գոմաղբը անհրա-
ժեշտ է տալ աշնանից հեկտարին 20 տոննա և
ապա կտտարել խորը ցրտահերկ:

93. Կտավհատը լավ բերք է տալիս սնուց-
ման դեպքում, վորը կտտարվում է պարարտա-
նյութը ձեռքով շաղ տալու միջոցով: Մնուցումը
կտտարել խոնավ, ամպոտ յեղանակին:

Կտավհատի հողի ճախացմեային մեակումը

94. Կտավհատի համար առանձնացված ցր-
տահերկը վաղ դարնանը փոցիսել զիզազ փո-
խերով, վարի հեկտառակ ուղղությամբ:

95. Նամ հողերի և բազմամյա խոտաբույս-

տերի տակ յեղած հողածառերի ինչպես և կոճղաբ-
ժառային մոլախոտերով վարակված հողերի կուլ-
տրվացիան պետք և կատարել 8—10 սմ. խորու-
թյամբ, զսպանակավոր կուլտիվատորներով յեր-
կուս յերես վարի հակառակ ուղղությամբ, հետա-
քայլում փոցխի, հավաքել մոլախոտերը հեռացնել
գաշտից և այլեր:

Կետվնտի ցանքը

96. Առանց սերմացույի համապատասխան
վերակը հաստատող լարորատորիայի վկայականի,
արգելվում և կտավհատի ցանքը:

97. Ցանքը կատարել վաղ գարնանացան-
ների հետ միասին, մեկ հեկտարին 50 կիլոգրամ:

98. Ցանքի խորությունը սահմանել 3—4
սանտիմետր:

99. Մոլախոտերի դեմ պայքարելու նպա-
տակով ամառվա ընթացքում 2—3 անգամ կա-
տարել ձեռքի քաղհան:

Պայթառ վնասատուների և հիվանդությունների դեմ

100. Կտավհատի ցանքերը վնասատուներեց
և հիվանդություններից դերժ պահելու համար
անհրաժեշտ և կատարել հետևյալը:

ա) Գարնան վաղ ցանք կատարել:

բ) Սերմացուն զոռել հատուկ մեքենաներով
(կուակոտագտիչ, կտավհատի հատուկ զոռիչ):

գ) Կատարել սերմերի չոր ախտահանում (Դա-

շ. ջանում, քաղհան - փխրեցման աշխատանքները
կատարել յուրաքանչյուր անգամ մեկից յերեք
բանվորական որում, ըստ վորի առաջին փխրե-
ցումը կատարել այնպես, վոր կարտոֆիլի մա-
տաղ ծիրերը հողով չծածկվեն և թմբեր չառա-
ջանան:

117. Կարտոֆիլի բուկ տալ ջրովի և խոնավ
պայմաններում 2—3 անգամ, անջրդի և չորա-
յին պայմաններում արգելել բուկ տալը, այդ-
պիսին փոխարինել անհրաժեշտ փխրեցմամբ:

Կարտոֆիլի ցանքի բուկը տալու աշխա-
տանքները կատարել յուրաքանչյուր անգամ
3—5 բանվորական որում, ըստ վորի:

ա) Ցերը թուփն ունի 13—15 սմ. բար-
ձրություն:

բ) Առաջին բուկը տալուց 8—10 որ անց:

118. Քաղհան-փխրեցման, ինչպես և բուկ
տալու աշխատանքները կատարել տրակտորա-
քարշ, ձիաքարշ և ձեռքի քաղհանիչ ու բուկից
մեքենա-գործիքներով:

119. Կարտոֆիլի ջուրը տալ՝

ա) Ցանքից 28—30 որ անց (առաջին բու-
կը տալու նախորդյալին):

բ) Թփի ծաղկման շրջանում, հետագա ջրե-
լու աշխատանքները կատարել ըստ բույսի պա-
հանջին: Վերջին ջուր տալը դադարեցնել բերքա-
հավաքից 15—20 որ առաջ:

Մանրութիւնը.— Յուրաքանչիւր ջրից հետո քեզին կատարել միջարժանին տարածութեան փխրեցում:

120. Կարտոֆիլի սերմագաշաերի տեսակաւոր մասսայական ցանքերը առաջին- յերկրորդ ջրին զուգընթաց իբրև սնուցում տալ տեղական պարարտանյութեր, որինհետիւր ձեւով առաջադրել հետարին գոմաղը 2—3 տ անա, կղկղանք 0,1—0,2 տոննա, միդաշուր 0,8—1 տոննա:

121. Կարտոֆիլի սերմագաշաերն ու տեսակաւոր մասսայական ամբողջ ցանքը, թփի ծաղկման շրջանում յենթաբնիկ ապարոքացիայի, վորին զուգահեռ կազմակերպել ցանքից հիվանդ թփերի պարտադիր հեռացումը (արմատախիւ անել և հեռացնել): 980/0-ից բարձր զտասորտ կարտոֆիլի տեսակաւոր ցանքից արմատախիւ անել և հեռացնել խառնուրդ սորաի թփերը (տեսակային քաղհան), իսկ ցածր զտասորտութիւնն ունեցող ցանքերում խառնուրդ թփերը ապարոքացիային զուգահեռ նշանադրում կատարել բերքահաւաքից 3—5 որ առաջ առանձին քանդել հավաքել: Այդ աշխատանքը կատարել խրճիթ լաբորատորիաների և փորձագետ կոլտնտեսականների միջոցով ագրոպերսոնալի անմիջական ցուցմունքներով:

Պայթառ վնասատուների և հիվանդութիւնների դեմ

122. Կարտոֆիլի ամբողջ ցանքերը իբրև

նախազգուշական միջոց ֆիտոֆտորա հիվանդութեան դեմ (պրոֆիլակտիկ) սրակել մեկ տոկոսացին բորոյան հեղուկով, անձրեւային, խոնավ և հիվանդութեան ուժեղ տարածման պայմաններին բուժումները կրկնել:

123. Ցանքերում նկատվող այլ հիվանդութիւններով վարակված թփի ինչպես որինալ գանգոտութիւնը (տերևների կուշ գալը) սնվածակ և բազմացողութիւնը, վարակված թփերը արմատախիւ անել ցանքի միջոց, հեռացնել և խորը թաղել կամ այրել:

Բերքահաւաքի ձմռան ամբարման նախորջակին, նույնպես և մինչև գարնանացանքը սերմագետ, ջուկել և հեռացնել հիվանդութիւններով վարակված բոլոր տեսակի պալարները:

124. Կարտոֆիլի ցանքերում ֆիտոտու գորագրինայի յերևան գալու մասին ճիշտ իր ժամանակին հազանգել և սկսել պայքար, համաձայն հրահանգի:

Բերքառավաք և ամբարման նախապատրաստում

125. Կարտոֆիլի բերքահաւաքն կատարել ըստ սորտերի սերմացույի նպատակով պալարի ֆիզիոլոգիական հասունացման, իսկ պարենային կարիքների համար պալարի տնտեսական հասունացման ժամանակ, արեւոս չոր յեղանակներին 7—10 բանվորական որում:

126. Կարտոֆիլի սերմադաշանքի, տեսար-
կավոր ցանքերի բերքահավաքի փոխադրումը,
ձմռան տմբարումը ըստ սորոտերի և կատիգո-
րիաների կատարել տուանձին-տուանձին:

127. Բերքահավաքից անմիջապես անց կապ-
մակերպել հողամասը ղրղզագով յերկու յերես
փոխում, հավաքելով դաշտում մնացած բոլոր
պալարները:

128. Սերմացույի համար կարտոֆիլի պա-
լարի ստուգումը կատարել դաշտում, բերքա-
հավաքին զուգահեռ: Առանձին դեպքերում սեր-
մադաշանքի և տեսակավոր մասսայական ցան-
քերից սերմացույի պահանջվող քանակը չապա-
հովելու դեպքում, պակասորդ սերմացուն լրաց-
նել կարտոֆիլի տնտեսական մնացած ցանքի
բերքից, ընտրելով լավագույն առողջ պալարները:

129. Բերքի դաշտից փոխադրումը կատա-
րել նախապես հարմարեցրած փոխադրական մի-
ջոցներով, արգելել կարտոֆիլի բերքի փոխա-
դրումների ժամանակ սրածայր վերջավորու-
թյամբ մետաղյա գործիքների գործադրումը:

130. Սերմացույի համար ընտրել 50 և ավելի բարձր զբաժանոց և միանգամայն առողջ
պալարները:

131. Կարտոֆիլի բերքահավաքից մեկ ամիս
առաջ ավարտել կարտոֆիլի պահեստների, փոխա-
դրական միջոցների, ստուգման, վերանորոգման

և սերմացու կարտոֆիլի անվտանգ տմբարումնե-
քը, հարմարեցնելու ինչպես և պահեստներին
տխտահանման աշխատանքները: Իբրև կանոն
սերմացու կարտոֆիլի տմբարումն ըստ սորոտերի
կատարել բուրա խրամատներում և տրանշեն-
քում: Առանձին դեպքերում հողբաժնի կամ ՄՏ
կայանի համաձայնությամբ թույլատրել պա-
հեստային տմբարման ձևը:

132. Բուրա-խրամատների տեղի ընտրու-
թյունը, փորման աշխատանքները, ողանցքներին
վերանորոգման, պակասի ձեռք բերման, ինչպես
և շերմաչափերի, ծղնտի ձեռք բերումը ավար-
տել կարտոֆիլի բերքահավաքից վոչ ուշ քան
5 որ առաջ:

Սերմացույի ձմռան խնամքը

133. Բուրա-խրամատներում, ինչպես և պա-
հեստներում սերմացու կարտոֆիլի շերտի բարձ-
րությունը սահմանել 1—1,25 մետր:

134. Կարտոֆիլի սերմացույի տմբարման
ընթացքում պահպանել ցելոֆոսով յերկուսից-
յեքեք աստիճան շերմություն:

Ջերմաստիճանի տատանումները կարգավո-
րել ողատար խողովակների միջոցով, ինչպես և
ըստ ծածկող շերտի նոսրացմամբ ու ավելաց-
մամբ:

135. Ջերմաստիճանի չափումների համար
առնենալ ըստ բուրա-խրամատների պահեստնե-

րի «գիտողությունների տետր» ազրոպերսոնալի-
ցուցմունքներով պարբերաբար գրանցել ջերմաս-
տիճանի տատանումները:

136. Բուրտավորման առաջին որերն իբրեւ
կանոն (նայած կլիմայական պայմաններին) բուրտ-
խորամատներին զագաթը չծածկել հողով, բաց թող-
նել բոլոր ողանցքները: Բուրտ-խորամատներին հո-
ղաշերտի ավարտումը, ողանցքների ծածկումը,
հարմարեցնել սառնամանիքներին:

137. Սուսափել ձմռան ընթացքում ամ-
բարված սերմացու կարտոֆիլի (մասսայական
ձևով) պարբերաբար ընտրությունը և տեղաշար-
ժի կատարելը:

138. Կազմակերպել սխտեմատիկ հսկողու-
թյուն առանձին տնկյուններում, փչացումների
բարձր տոկոս ունենալիս ընտրությունը և տե-
ղափոխումը կատարել միմիայն այդ տեղերից:

Սերմացու կարտոֆիլի ամբողջական ընտ-
րություն և փոխադրումներ կատարել (բուրտ-խո-
րամատներից, պահեստներից) միմիայն հողբաժ-
կամ ՄՏ կայանի գիտությամբ:

139. Իբրեւ կանոն արգելել գարնանը—
յեղանակները տաքանալու, բուրտ-խորամատների
հողի ծածկորդ շերտի նոսրացումն ու որվա առա-
ժամներին, զանցքների բացումը, բուրտում պա-
հեստում, ողանցքները բացել միմիայն գիշերներն
ու առավոտյան և յերեկոյան հով ժամերին:

140. Կոլտնտեսություններում առանձնաց-
նել սերմացու կարտոֆիլի ձմռան ամբարման
համար պատասխանատու աշխատողներ:

ԿԵՐԱՐՈՒՅՍԵՐԻ, ԲՆԱԿԱՆ ԽՈՏՆԱՐՔՆԵՐԻ ՅԵՎ
ԱՐՈՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

ԱՌՎՈՒՅՑԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Հողի նախապատրաստում առվայթի ցամփի համար

Աշնանը կատարել հերկ 20—22 սանտ. խո-
րությամբ, ծանր կավային հողերում գարնան
հողի մշակության համար հասունացած շրջա-
նում կատարել փխրեցում կուլտիվատորներով
կամ լուշչինիկներով, թեթև հողերում ցրտահերկը
գարնանը ծանր ատամնավոր փոցիներով փոցիել
2—3 անգամ, վորից հետո հավաքել մոլախ տե-
րի արմատները և այլն:

Ցանքի ժամկետը չորացնելու համար գար-
նան մշակույթը կատարել շատ կարճ ժամանա-
կում, հողի խոնավությունը մեծ չափով ոգտա-
գործելու համար:

Պաճարացում.— Լայն կերպով ոգտագոր-
ծել տեղական պարարտանյութերը:

Ցանք.— Ցանքը կատարել վաղ գարնան
առաջին խիստ հնարավորության դեպքում, հաշվի
առնելով հողային կլիմայական պայմանները և
յինևնով առանձին զանաններից, սերմաբուսական
նպատակով առվույթը ցանել մաքուր, առանց

ծածկույթի, շարքացանով 60—70 սանտիմետր միջնորձային տարածությամբ (այդ նպատակին հարմարեցնել և ոգտագործել հացահատիկի սովորական տրակտորային կամ ձիու շարքացանները):

Ցանքի խորությունը.— Ծանր հողերում ցանքը կատարել մեկ սանտիմետրի սահմաններում, թեթև հողերում 1—2 սմ. խորությամբ (յիսնույթ հողային պայմաններին) սեղում կոնկրետացնել, ճշտել խորությունը:

Սերմացույի նորման.— Շարքացանով լայնաշարք ցանք կատարելու դեպքում ցանել 4—6 կիլոգրամ, շարքացանով համատարած ցանքի դեպքում 9—12 կիլոգրամ, շաղացան 15—16 կիլոգրամ մեկ հեկտարին:

Նախքան ցանք կատարելը սերմը պետք է վարակել նիտրոգինով, դեկավարվելով համապատասխան հրահանգով, արգելել անասունների արածացնելը առվույտի դաշտում:

Ջրելու ժամկետը և նորման.— Ցանքի առաջին տորին յնթացան առվույտի ջրելը հարմարեցնել հացաբույսերի պահանջին, մինչև նրանց հունձը, իսկ հացաբույսերի հունձին հետո առվույտը ջրել ըստ պահանջի, բայց վաղ պակաս 2 անգամից. առաջին անգամ ջրել հացաբույսերի հնձին անմիջապես հետո, իսկ յերկրորդ անգամ 10—15 օր հետո:

Առվույտի 2-րդ տարվա ավելի հին ցանքերը ջրել ըստ պահանջի (յիսնույթ հողի և բույսի պահանջը), իսկ իբրև կանոն յուրաքանչյուր հնձին հետո անպայման ջրել:

Սերմ ստանալու նպատակով կատարած լայնաշարք առվույտի առաջին տարվա ցանքերի առաջին վեգետացիոն ջուրը պետք է կատարել այն ժամանակ, յերբ յերևան են գալիս 2—3 տերևիկներ (չնաշված ցանելուց հետո անմիջապես կատարված ջուրը):

Ցանքի առաջին տարվա խնամք.— Ցնեթացանքի առաջին տորին կիրառվում է հացահատիկների համար սահմանված խնամքի և մշակման միջոցառումները: Յերկրորդ տարվանից հետո պետք է դաշտը փոցխել:

Սերմառանքի առաջին տարվա խնամք.— Լայնաշարք ցանքերի միջնորձային տարածությունների կուլտիվացիան և քաղհանք կատարել ամառվա ընթացքում վաղ պակաս 3 անգամից. առաջին մշակույթը կատարել, յերբ շարքերը նշմարվում են, յերկրորդը 12—15 օր առաջին մշակութունից հետո (յիսնույթ սերմարանի զրուցությունից) հետագայի մշակույթը կատարել յուրաքանչյուր ջրից հետո:

Շարքացանով համատարած ցանքի դեպքում փոցխումը պետք է կատարվի շարքացանի հաջորդական ուղղությամբ:

Բերքահավաք.— Խոտի համար առվույտը հնձել ծաղկման սկզբին, պահանջված չափով չորացնելուց հետո դաշտից փոխադրել տնտեսության և դիզել:

Սերմի Հավաք.— Սերմացու առվույտը հավաքել յերբ պատրիճների 75 տոկոսը գորշացել է: Կորուստներից խուսափելու համար հունձը կատարել վաղ առավոտյան, իսկ տեղափոխումը կատարել սայլերի մեջ բրկեղևտներ կամ այլ ծածկոցներ փռելով, վորից հետո անմիջապես կազմակերպել կախումը և սերմի հավաքումը:

Տարբեր սորտերի սերմերը ինչպես և ապարդացիայի յենթարկված տարածութիւններից ստացված սերմերը պետք է հնձել, կախել և պահեստել առանձին առանձին:

Պայքար վնասատուների դիմ.— Առվույտի թրթուրը յերեկալիս առաջին քաղը պետք է կատարել ավելի շուտ— անմիջապես, վորպեսզի վնասատուն չտարածվի:

Դադնով վարակված դաշտերի դաղձը պետք է հավաքել և հեռացնելով դաշտից ու այլեր:

Ուժեղ վարակված դաշտերը պետք է վարել և մի քանի տարի առվույտ չցանել:

ԿՈՐՆԳԱՆԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Կորնդանը հողի նկատմամբ պահանջկոտ չէ, քաղ աճում է չորային հողերում, չի կարելի ցանել ձաճաճացած, թթու, մշտապես խոնավ հողերում:

Հողի նախապատրաստումը կորնգանի ցանքի համար

Ինչպես բոլոր խոտաբույսերը, ևույնպես և կորնդանը պահանջում է լավ մշակված հող, վորի համար պետք է աշնանը կատարել ցրտահերձ 20—22 սմ. խորությամբ, իսկ զարնանը կատարել յերեսվար, ապա լավ փոցխել և հավաքել մոզախոտերի արմատներն ու այլեր:

Հողի խոնավութիւնը լրիվ ոգտագործելու համար զարնան մշակութիւնը պետք է կատարել կարճ ժամանակամիջոցում, վորով և հնարավորութիւն տալ բույսի արագ զարգանալուն:

Ցանքը պետք է կատարել լաբորատորիայի կողմից կոնդիցիոն ճանաչված սերմերով:

Սերմացույի նորման. Լայնաշարք ցանք կատարելու դեպքում, յենեկով հողային, կլիմայական պայմաններից, սերմացույի նորման ընդունել 25—40 կիլոգրամ, համատարած շարքացանի դեպքում մեկ ցենտներ մեկ հեկտարին:

Մինչև ցանքի կատարելը կորնդանի սերմը վարակել նիտրոգինով:

Ցանք. Կորնդանի յենթացանքը կատարել զարնանը հացահատիկների տակ, նրանց ցանքին զուգընթաց:

Շարքացանների համար հողամասերում ցանքը կատարել շարքացանով հացաբույսերի շարքերի հակառակ ուղղությամբ, սերմ ստանալու

նպատակով կորնգանը ցանել մաքուր, 60—70 սմ. (միջարքային տարածությամբ) այն նպատակին հարմարեցնել հացահատիկների տրակտորային համ ձիու շարքացանները):

Յամբի խնուրումը.— Յենիկով հողային և հլիմայական պայմաններից, ցանքը կատարել 2—5 սանտիմետր խորությամբ:

Յամբի խնամքը.— Յենթացանք կատարված կորնգանի առաջին տարին պետք է կիրառել հացաբույսերի խնամքի և մշակման միջոցառումները: հետագայում քաղից հետո, դաշտը պետք է փոցիել:

Հայնաշտրք ցանքերի խնամքը միջարքային տարածությունների կուլտիվացիան և քաղհանը պետք է կատարել շարքը լավ յերևալուց, հողի կեղևակարման և մոլախոտերի յերևան գալու ժամանակ, բայց վոչ պակաս 2—3 անգամ սովան ընթացքում:

Արգելի անասունների արածացնելը կորնգանի դաշտերում:

Ինքահավաք.— Խոտի համար քաղվող կորնգանը պետք է հնձել 30⁰/0-ով ծաղկելը, չորացնելուց հետո տեղափոխել անասնություն և դիզել: Յերի կորնգանը ցանված է ջրովի հողամասերում, ապա քաղելուց հետո պետք է ջրել սերմ ստանալու համար, ցանված կորնգանը պետք է քաղել յերբ կունդերը մուգ կանաչ գույնից անցել

են քաց կանաչ գույնի և ներքին հունդերի: 2—3-ը գորշացել, հասունացել են, հետո կազմել փոքր խրճիկներ և չորացնել:

Կորուստներ չտալու համար անհրաժեշտ է տեղափոխման ժամանակ սայլերի մեջ բերեղևաներ կամ այլ շորեր փռել և այնպես փոխադրել կալն ու վերջապես կալսել:

Ստացած սերմերը պետք է լավ չորացնել և ապա պահել չոր, մաքուր և ախտահանված պահաստներում: Տարբեր սորտերի, ջրովի և անջրդի տարածությունների, ինչպես և ապագորքայի յենթարկված տարածությունների սերմերի հավաքը, կարտւմը և պահեստումը պետք է կատարել առանձին, չխառնելով մեկը-մյուսի հետ:

ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՎԻԿԱՅԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Վիկան չի կարելի ցանել ստորերկրյա ջրերի մոտիկ, ավազային և կավային հողամասերում, ինչպես նաև հարավում գտնվող հողամասերի չոր լանջերի վրա:

Ցանքը պետք է կատարել միայն կոնգրիգիտ սերմերով, հեկտարին մեկ ցենտրներ:

Վիկի համար հատկացրած հողամասը աշնանը պետք է հերկել 18—20 սմ. խորությամբ:

Գարնանացանքից առաջ հերկված հողամասը կրկնավարել և խնամքով փոցիել:

Յամբի ժամկետը

Վիկան պատկանում է այն բույսերի շար-

քին, վորոնք պահանջկոտ են խոնավութեան նկատմամբ, ուստի պետք է ցանքը կատարել վաղ գարնանը վարսակի կամ գարու հետ խառը՝ մեկ ցինտներ վիկային 0,6 ցինտներ վարսակ կամ գարի, վորպեսզի վիկան չպարկի:

Ցանքը կատարելուց առաջ սերմը նիտրոգի նացանել:

Բերքահավաք

Կերի համար վիկան պետք է հնձել ծաղկման շրջանում:

Սերմացու վիկան պետք է հավաքել յերբ պատիճների 50 տոկոսը հասունացել է, հնձած վիկան պետք է լավ չորացնելուց հետո զգուշութեամբ տողափոխել և զիգել:

Սերմարանը հավաքել առավոտյան ցողին, յերբ բույսը չորացած չի լինում, կախումը կատարելուց հետո միանգամ ևս սերմը լավ չորացնել և ապա պահեստել:

Սիլոսայիմ արևածաղկի մօտեւորյունք

Շատ խոնավ և ճահճացած հողերն արևածաղկի համար պիտանի չեն:

Արևածաղկին հատկացված հողամասը պետք է աշնանացանից 20—22 սմ. խորութեամբ վաճել, իսկ վաղ գարնանը լուշչիլներին երով փխրեցնել և լավ փոշխել:

Ցանքի ժամանակը

Արևածաղիկը պետք է ցանել լայն շարքե-

քով 50—60 սմ. միջարքային տարածութեամբ 5 սմ. խորութեամբ, սերմացույի նորման ընդունելով մեկ հեկտարի համար 30—40 կիլոգրամ, իբրև սերմացու ոգտագործել լաբորատորիայի կողմից կոնդիցիոն ճանաչված արևածաղկի սերմերով:

Ցանքի խնամքը

Հողը կեղեվակալելուց հետո պետք է փխրեցնել միջարքային տարածութեանները, առաջին քաղհանը և նախնական նոսրացումը պետք է կատարել 2—4 զույգ իսկական տերեւները յերեկալու ժամանակ: Յերկրորդ քաղհանը և վերջնական նոսրացումը կատարել առաջին քաղհանից 15—20 օր հետո, վերջնական նոսրացումից հետո ճուլսերը ակոսի յերկարութեամբ, իրարից 15—20 սմ. հեռավորութեան վրա թողնել:

Բերքահավաք

Սիլոսի համար արևածաղիկը պետք է քաղել լրիվ ծաղկման շրջանում:

ԿԵՐԻ ԶԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հողի նախապատրաստում.— Կերի ճահնդեղին հատկացված հողամասի հերկը կատարել աշնանից 20—25 սմ. խորութեամբ, աշնան կատարված խոր հերկը չփոցել մինչև գարուն, գարնանը դաշտ դուրս գալու առաջին հնարավորութեան դեպքում կատարել կրկնավար 10—12 սմ. խորու-

Թյամբ և ապա խաչադիր ձեւով յերկու անգամ փոցիել:

Կերի ճակնդեղի համար առանձնացված հոգամասի յերեսվարը կատարել նախորդ կուլտուրաների բերքահավաքի զուգընթաց 5—6 սմ. խորությամբ:

Պարարտացում

Պարարտացումը կատարել աշնան խոր հերկի տակ տաով 30—40 տոննա զոմաղը, կամ 10—15 տոննա խառն աղը:

Յամբը.—Կերի ճակնդեղի ցանքը պետք և կատարել վաղ գարնանացան կուլտուրաների ցանքին զուգընթաց:

Սերմացույի նորման կոնդիցիոն վիճակում մեկ հեկտարին 16—20 կիրգբամ:

Յամբի մեախում.—Ծանր կավային հողերում ձիւր յերեվալուն պես կատարել միջարքային տարածությունների առաջին մշակումը (կուլտիվատորներով) և ամբողջ ցանքի համար տարած քաղհանը:

Խսկական տերևների առաջին զույգը կադմելուց, կատարել բույսերի նոսրացում, թողնելով մեկական բույս 18—20 սմ. հեռավորության վրա մեկը-մյուսից, նոսրացումից հետո կատարել սառուցում և բաց մնացած տեղերը ցանել թրջված սերմերով:

Յերկրորդ զույգ տերևները յերեսալուց կա-

տարել յերկրորդ փխրեցումը և մոլախոտերի քաղհանը:

Ճակնդեղի նոսրացման, քաղհանի և մշակման բոլոր աշխատանքները պետք և շարունակել մինչև շարքերում յեղած բույսերի իրար միանալը:

Ամռան ընթացքում մոլախոտերի քաղհանը և հողի փխրեցումը պետք և կատարել 3 անգամից վոչ պակաս:

Բերքահավաք.—Կերի ճակնդեղի բերքահավաքը պետք և սկսել յերբ տերևներն սկսում են չորանալ և շարքերը նորից բացվում են:

Բերքահավաքը պետք և կատարել չոր յեղանակներին մինչև ցրտերն ընկնելը:

ՍԻԼՈՍԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

Սիլոսային կուլտուրաների բերքահավաքի և սիլոսային հումքի մյուս տեսակների հավաքման ժամկետները:

Սիլոսացվող բոլոր կուլտուրաներն ունեն հասունացման վորոշ շրջան, վորի ժամանակ նրանք ամենամեծ չափով սննդարար նյութեր են պարունակում և սիլոսացման ամենալավ մասսա են տալիս:

Սիլոսային կուլտուրաների համար բերքահավաքի հետեվյալ ժամկետներն են սահմանված:

1. ԱՐԵՎԱԾԱՂԻԿ.—Ծաղկման սկզբից, բայց վոչ ուշ լիակատար ծաղկման շրջանից:

3) ՄՈՒՆԻՍԻՏԵՐ ԵՆՎ ՎԱՅՐԻ ԽՈՏԵՐ.—

Միլոսի համար կարելի չե հնձել յերկու անգամ, առաջին անգամ մինչև ծաղկելը, իսկ յերկրորդ անգամ ըստ հասունացման, սակայն մինչև սպունամանիքներն սկսելը:

5) ԲՈՇԽ ԵՆՎ ԱՅԼ ՃԱՀՃԱՅԻՆ ԲՈՒՅ-ՍԵՐԸ ՄԻՆՁԵՎ ԾԱՂԿԵԼԸ.—

Յեղեգն գարնանը մինչեւ հուրան արձա-կելը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յեթե յեղեգն սիլոսի հնձելու ժամկետն անցել է, անհրաժեշտ է կոշտա-ցած մասսան հնձել և վորպեսզի սիլոսի համար ոգտազորձի ահլուկը (ատավան):

ՄԻԼՈՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱ-ԲԵՐՅԱԼ.— Յուրաքանչյուր սիլոսային կառուց-վածքը, անկախ նրա ձևվից տեսակից ու արպից պետք է համապատասխանի հետեւյալ պահանջ-ներին:

1. Պատերը ոգի և ջրի համար պետք է լինեն անթափանցելի:

2. Ներքին մակերեսը պետք է լինի հարթ և հավասար:

3. Պատերը պետք է լինեն ուղղաձիգ, խրամատի պատերը կարելի չե վորոշ չափով թեք կառուցել:

4. Պահանջվում է ամրութուն:

5. Նվազագույն ջերմաթափանցություն:

6. Կեր լցնելու և դատարկելու հարմարու-թյուններ:

7. Բոլոր սիլոսային կառուցվածքները նը-պատակահարմար է, վոր լինեն գոսերի մոտ, սա-կայն այն հաշվով, վոր նրանց մեջ չլցվեն մի-զաջրերն ու անձրեկաջրերը:

ՄԻԼՈՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏՈՒՄԸ

Միլոսի բոլոր կառուցվածքները, ինչպես հորերն ու խրամատները, նույնը և աշտարակները պետք է նախքան սիլոս լցնելը ստուգել և սարքի բերել, բոլոր անցքներն ու դռնակները մաքրել կեղտոտություններից և կողմնակի իրերից:

Պատերին ու հատակին պետք է քսել 5 տոկոսանի լուծույթ, նոր հանգցրած կրով, վոր-պես ախտահանիչ նյութ:

ՄԻԼՈՍԱՅԻՆ ՇՈՒՄՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Միլոսային բույսեր կարելի չե հնձել սովո-րական հնձող մեքենաներով, նրանց բացակայու-թյան դեպքում հնձում են գերանգրով:

Միլոսային մասսայի հունձը պետք է կա-տարել այն հաշվով, վորը հնարավոր լինի նույն որը հավաքել և դաշտից փոխադրել ու սիլոսացման յենթարկել:

Միլոսային մասսայի խոնավությունը՝ նա-յած բույսի փեսակին ու կլիմայական պայմաննե-

ըին թուլլատրելի յե 65—70 տոկոսի սահմաններում:

Կանաչ մասսայի լցնելը.—Սիլոսային կառուցվածքը պետք է լցնել առանց ընդհատումների ու կարճ ժամանակամիջոցում այն հորերն ու խրամատները 2 որում, կիսաաշտարակներն ու աշտարակներն 3—4 որում:

Սիլոսային կառուցվածքների ծածկը պետք է լինի ողի նկատմամբ անթափանցելի, զմրեթաձև ու նրա հիմքը պետք է 50 սմ. հեռու լինի ափերից (պլուտոնգներից):

Սիլոսային կառուցվածքների խնամքը.—Սիլոսն ոգտազործելուց ու լրիվ չափով դատարկելուց հետո սիլոսային կառուցվածքները պետք է լավ մաքրել սիլոսի բոլոր տեսակի մնացորդներից, հնարավորութայն սահմաններում շուրջը ցանկապատել, վոր անասուններ և կենդանիներ չընկնեն սեջը:

ԲՆԱԿԱՆ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ

Բ Ա Ր Ե Լ Ա Վ Ո Ւ Մ Ը

Խոտհարքների մախապատահումը խոտհանի համար.—Վաղ գարնանից կատարել խոտհարքների քարերի մաքրումն այն հաշվով, վորպեսզի խոտհարքի ամբողջ տարածութայնը հնարավոր լինի մաքուր հնձել: Խոտի փոխադրումը դեպի

տնտեսութայն տպահովելու նպատակով կատարել ճանապարհների վերանորոգում: Խոտհանի մեքենաների և մանր ինվենտարի վերանորոգումը լրիվ ավարտել պետութայն կողմից սահմանված ժամկետում մինչև խոտհանձն սկսելը, խոտհարքի ամբողջ տարածութայնը պետք է ամրացնել բրդադներին, խոտհանի ամբողջ ընթացքում:

Կտնեզորիկ կերպով արգելել խոտհարքներում անասուններ արածացնել մինչև խոտհանի ավարտումը, վորը խիստ կերպով իջնցում է խոտհարքի բերքատվութայնը և վորակը:

Պարարտացում կատարել վաղ գարնանը խոտհարքը դուրս գալու առաջին հնարավորութայն դեպքում, լավ քայքայված գոմաղբով:

Թոււնավոր բույսերի և մոլախոտերի դեմ պայքարն սկսել վաղ գարնանից մինչև նրանց սերմակալելը: Ամենաշատ տարածված թոււնավոր խոտերից մեկը խնձլամերն է և մի շարք ուրիշները, իսկ մոլախոտերից շատ տարածված են բոլոր տեսակի փշերը, ինչպես թոււնավոր բույսերի, նույնպես և մոլախոտերի դեմ պայքարել արմատախիւ անելով նրանց մինչև ծաղկումը:

Հուլիս.— Յերբ խոտակազմի մեջ գերակշռում են հացադգիներին պատկանող բույսերը, հուլիսը պետք է կատարել նրանց հիմնական տեսակների հասկերն արձակելու ընթացքում, այն

հաշվով, վոր խոտհունձն ավարավի նրանց ծաղկման վերջում: Խոտակաղմի մեջ լոբազգիների և այլ տեսակ խոտազգիների գերակշռման դեպքում, խոտհունձն սկսել նրանց կոկոնակալման վերջում և ավարտել ծաղկման ընթացքում:

Տվյալ ժամկետում հնձի կատարումը մի կողմից ապահովում է մաքսիմալ սննդանյութերի կուտակումը, մյուս կողմից ավելի խոնավ և առաջնակարգ խոտհարքներում լրիվ չափով ապահովում է յերկրորդ հունձը:

Ավելի շատ մասսա ստանալու նպատակով խոտը հնձել 2—4 սմ. բարձրության վրա:

Վոչ մի դեպքում չպետք է ուշացնել քաղած խոտի հավաքը, այլապես նա շատ կչորանա կամ ել անձրևներից կխոնավանա և կփչանա թե առաջին և թե յերկրորդ դեպքում տեղի կունենա խոտի սննդանյութերի խոշոր կորուստ:

Զորացած խոտի խոնավությունը 16 տոկոսից բարձր չպետք է լինի:

Կորուստներից խուսափելու համար խոտը քիչ ջրջել, վորպեսզի (ամենասնդարար մասերը) նուրբ տերևները և ծաղիկները չփշրվեն ու չթափվեն: Խոտհնձին զուգընթաց կազմակերպել խոտի փոխադրումը դեպի տնտեսություն և գիղեր:

Դեզ դնելը.— Կավ չորացնելուց հետո խոտը գիղել հարթ և չոր տեղերում: Հրդեհներից խուսափելու համար զեզերը մեկը մյուսից դնել

100—150 մետր հեռավորության վրա և շուրջը փոքրիկ առվակներ ու մոտիկ ջուր ունենալ:

Արտոսների բառեղավումը.— Անասուններին արածացնելը սկսել ձյունը հալչելուց և հողը չորանալուց հետո, հակառակ դեպքում կառաջանան կոշտեր, վորոնք կնպաստեն խոնավության ավելացուկի կուտակման, հետևաբար և խոնավություն սիրող ցածր արժեքականություն ունեցող խոտերի տարածման և խոչընդոտ կհանդիսանան մեքենայացման կիրառման: Կիրառել արոտների հերթականությամբ ոգտագործելու ձևը, վորի համար արոտավայրը բաժանել առանձին արոտամասերի և արածացնելը կատարել այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր արածացրած արոտամասին մինչև նրա վրա 2-րդ անգամ արածացնելը հնարավորություն տրվի հանգստանալ, խոտակազմը վերականգնելու համար: Արոտների նպատակահարմար ոգտագործման համար վերջիններիս ամրացնել ըստ անասունների տեսակի, այն է առանձին մասիֆներ հատկացնել խոշոր և մանր յեղջուրավոր անասուններին, ըստ վորում խոշոր յեղջուրավոր անասուններին հատկացնել հարթ տարածությունները, իսկ թեք լանջերում արածացնել մանր յեղջուրավոր անասուններին:

Անասուններին պետք է արածացնել ամբողջ որը գիղեր ու ցերեկ, սահմանելով խիստ հսկողություն գիղերը արածացնելուց:

Յերեկն անասուններին պիտք է արածաց-
նել նրանց գիշերելու տեղից հեռու արոտներում,
ավելի քարքարոտ լանջերում, գիշերները նրանց
գիշերելու տեղից մոտ ավելի հարթ տարածու-
թյուններում:

Անձրևային և մառախլապատ որերին թեք
լանջերում անասուններին չպիտք է արածացնել:

Արոտները քարերից մաքրման աշխատանքն
սկսել արոտը դուրս գալու սկզբից մինչև աշուն
(յերբ տնտեսութունն ունենում է ավելի շատ
ազատ բանվորական ուժ):

— Թունավոր բուսականության և մոլախո-
տերի դեմ սիստեմատիկորեն պայքար տանել
մինչև նրանց ծաղկումը, վորոնք խիստ կերպով
խոչընդոտ են հանդիսանում կերային բարձր ար-
ժեք ունեցող խոտերի զարգացման և իջեցնում
են արոտների ու մարգագետինների խոտի ար-
ժեքը: Մոլախոտերը վոչնչացնել, հնձելով, ար-
մատախիլ անելով կամ բահերով քանդելով:

Ճանճային մոլախոտերի դեմ պայքարել ճա-
հիճները չորացնելու միջոցով, իսկ ճահճացած
մեծ տարածությունները չորացնել դրենաժի մի-
ջոցով: Վաղ գարնանից զբաղվել աղբյուրների և
ջրամբարների (գյուրերի) մաքրման և վերանո-
րոգման գործով, անցկացնել ճանապարհներ դե-
պի աղբյուրները, վորպեսզի անասունները ամ-
բողջ արոտը չտրորեն, վերանորոգել արոտ տո-
նող ճանապարհները և կամուրջները:

Արոտի շրջանի վերջւմ յաթաղներում կու-
տակված գոմաղբը համաչափ փռել արոտավայ-
րում, բացի այդ, արածացրած ժամանակ գոմաղբը
նույն տեղում մնալով այրում է բուսականությու-
նը, ցանկալի յե նաև այդ գոմաղբը ցրել, վորի
համար պիտք է շահագրգռել հովիվներին այդ
աշխատանքը կատարելու համար:

Ուստ արորված և հոգնած արոտների ոգ-
տագործումը ժամանակավորապես զադարեցնել,
սալով նրանց հանգիստ: Այն տնտեսություննե-
րը, վորոնք խոտով ապահովված չեն, արոտավայ-
րերից լավագույն հողամասերը կարող են վերա-
ծել խոտհարքների:

Նպատակ ունենալով արոտավայրերի խոտի
բուսանիկական կազմը լրացնելու, ինչպես և ա-
րոտավայրը վերականգնելու, կազմակերպել ար-
ժեքավոր վայրի խոտասերմերի հավաքման գոր-
ծը նոր տարածությունների ցանքը կատարելու
համար, վորի համար առանձնացնել համապա-
տասխան տարածություններ, արգելելու անա-
սուններին արածացնել այդ հողամասերում:

Արգելել արոտների և խոտասերմերի վո-
րելը, այդ գործում հանցավորներին պատժելու
տական պատասխանատվության:





ՀՀ Ազգային գրադարան



NL0280155

25K

30

15359

481

800

631

11-41

39